Հայաստանի հանրապետության բարձրագույն կրթության հզորացում՝
Եվրոպական բարձրագուն կրթության համակարգին ինտեգրման նպատակով

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ՝	Բարձրագույն կրթություն
Տևողություն՝	24 ամիս
Իրականացման ժամանակահատված՝	հոկտեմբեր 2014թ. - հուլիս 2016թ.
Բյուջե՝	1մլն եվրո

Շահառու հաստատություն՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն

ԵՄ անդամ գործընկեր պետություններ՝
առաջատար գործընկեր - Ֆինլանդիա

Ծրագրի նկարագիր

Նպատակներ՝

ա) Բոլոնիայի գործընթացի առանցքային փաստաթղթերին համապատասխանելու նպատակով Հայաստանի հանրապետության որակավորումների ազգային շրջանակի համար իրավական դաշտի եւ ինստիտուցիոնալ միջոցառումների մշակում: Սերտորեն համագործակցելով շահագրգիռ կողմերի հետ՝ ծրագիրը պետք է աջակցի Կրթության և գիտության նախարարությանը և Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնին հաստատել բարձրագույն կրթության կարգավորման գործընթացների առաջնահերթությունները:

բ) Ինստիտուցիոնալ հզորացման աջակցություն Հայաստանի՝ Որակավորումների ազգային շրջանակի հաստատություններին, մասնավորապես՝ Կրթության և գիտության նախարարությանը և Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնին՝ նոր կարգավորող փաստաթղթերի պատշաճ կերպով իրականացման եւ ոլորտի լավագույն փորձը որդեգրելու նպատակով ներքին գործառնական մեթոդների հաստատման և զարգացման համար:

գ) Առաջիկա պարտավորությունները արդյունավետրեն ստանձնելու նպատակով իրենց ինստիտուցիոնալ կարողությունները զարգացնելու հարցում բարձրագույն ուսումնական հաստատություններին աջակցելու նպատակով դասընթացներ և իրազեկության բարձրացում:

Բաղադրիչներ ՝ **I Բաղադրիչ**՝ Որակավորումների ազգային շրջանակի մշակման և իրականացման նպատակով բարձրագույն կրթության եւ ինստիտուցիոնալ մեխանիզմների մասին Հայաստանի հանրապետության օրենսդրության վերանայում

II Բաղադրիչ՝ Կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչների կարողությունների հզորացում Բոլոնիայի բարեփոխումները հաստատելու նպատակով և իրականացված բարեփոխումների մասին իրազեկության բարձրացում

III Բաղադրիչ՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի ներկայացուցիչների կարողությունների հզորացում Բոլոնիայի բարեփոխումները իրականացնելու և պահպանելու նպատակով և իրականացված բարեփոխումների մասին իրազեկության բարձրացում

IV Բաղադրիչ՝ Բոլոնյան բարեփոխումների իրականացման համար համալսարանների ներկայացուցիչների կարողությունների հզորացում

V Բաղադրիչ՝ Որակավորումների ազգային շրջանակը և Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները համապատասխանում են աշխատանքի շուկայի գործատուների և շրջանավարտների պահանջներին:

Ձեռք բերված արդյունքներ

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական արդյունքները հետևյալն են՝

1. Բարձրագույն կրթության համար օրենսդրական դաշտը վերանայվել է՝ բուհերում ճկուն ուսումնական ծրագրերի օգնությամբ, Բոլոնիայի նախաձեռնությունների իրականացմանը խոչընդոտող բացերը բացահայտելու եւ բացթողումները հաղթահարելու և բարեփոխումների իրականացմանն աջակցելու նպատակով: Վերանայվել են ազգային որակավորումների շրջանակի զարգացման և պահպանման ինստիտուցիոնալ մեխանիզմները, այնուհետև փոփոխությունների և բարեփոխումների իրականացման համար ներկայացվել են առաջարկություններ և տրամադրվել է աջակցություն:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարությունում նշանակված անձնակազմը վերապատրաստում է անցել բարձրագույն կրթական ծրագրերի համար գրավոր ուսումնառության արդյունքների վերաբերյալ և ընդունել բարձրագույն կրթության վերաբերյալ կանոնակարգեր՝ ուսումնառության արդյունքների սկզբունքներին համահունչ:
3. Մասնագիտական կրթության որակի ապահովման հայկական ազգային կենտրոնում նշանակված անձնակազմը վերապատրաստում է անցել բարձրագույն կրթական ծրագրերի համար գրավոր ուսումնառության արդյունքների վերաբերյալ և մշակել ուսումնական արդյունքների հիման վրա բարձրագույն կրթական ծրագրերի գնահատման մեթոդաբանությունը:
4. 26 հանրային բուհերից ընտրված աշխատակազմի որոշ թվով անդամներ վերապատրաստվել են և գնահատում են աշակերտների ուսումնական ձեռքբերումները և այդ ուսումնառության արդյունքները համապատասխանեցնում են Հայաստանի ազգային որակավորման շրջանակի մակարդակին:

5. Յուրաքանչյուր համալսարան մշակել է մեթոդաբանություն կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգին դիմելու նպատակով, ինչպես նաև գնահատելու յուրաքանչյուր ծրագրի աստիճանը, որով համապատասխանում է Հայաստանի ազգային որակավորման ստանդարտներին: Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի առավել լավ օգտագործումը նպաստեց ուսումնական ծրագրերի ավելի մեծ ճկունությանը և ուսանողական շարժունության բարելավմանը:
6. Հայաստանի ազգային որակավորման շրջանակը բավարարեց ինչպես աշխատաշուկայի, այնպես էլ շրջանավարտների պահանջները և հնարավորություն տվեցին Հայաստանին բավարարել Բոլոնյան գործընթացի իր պարտականությունները:

Լրացուցիչ տեղեկատվություն՝